

ԱՐՏՅՈՍ ԳԵՐԱՍԻՄԻ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

«Առնո Բաբաջանյանի հիշատակին» միջազգային հիմնադրամի
գիտահետազոտական գծով փոխնախագահ, արվեստի պատմաբան
E-mail: artyom_andreasyan.97@mail.ru
Doi:10.58580/18290019-2024.1-2-89

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝ 20.12.2024 թ.,
ընդունվել է տպագրության՝ 24.12.2024 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 2.12.2024 թ.:
© Հեղինակ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution
4.0, 3.0 Licence-ին համապատասխան:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Անփոփում

ԽՄՇ ժողովրդական արտիստ, պետական և միջազգային մրցանակների դափնեկիր, կոմպոզիտոր և դաշնակահար Առնո Հարությունի Բաբաջանյանի ստեղծագործական ժառանգության համահավաք հրատարակության մասին արդեն չորս տասնամյակ տարբեր կարծիքներ են հնչում: Այդ ծրագրի լիարժեք համակողմանի իրագործման նպատակով «Առնո Բաբաջանյանի հիշատակին» հիմնադրամի մոսկովյան ղեկավարությունը տևական ժամանակ ծավալուն նախապատրաստական աշխատանքներ է կատարում՝ ձեռագիր, տպագիր և ձայնագիր աղբյուրների համատեղում, ինչն ուղեկցվում է նախկինում անհայտ և կորած համարվող բնագրերի հայտնաբերմամբ, մատենագիտության և սկավառակագրության ստեղծում, համալիր պատմագիտական և բնագրագիտական հետազոտություններ: Այդ ամենի հիմնական արդյունքը Բաբաջանյանի երկերի առաջին բազմահատոր ժողովածուն է, որը հանդես է գալիս որպես գիտաքննական հրատարակություն և ամփոփելու է մեծանուն կոմպոզիտորի ստեղծագործության բոլոր ժանրերը 25 հատորում՝ 30 գրքով: Այստեղ ներառվելու են բոլոր պահպանված ավարտուն և առավել նշանակալի անավարտ երկերը: Բոլոր բնագրերը ներկայացվելու են գիտականորեն ճշգրտված տեքստով և կից պատմագիտական ու բնագրագիտական ամփոփ տեղեկություններով: Այս ծավալուն գիտահրատարակչական ծրագիրն իրագործվում է «Առնո Բաբաջանյանի հիշատակին» հիմնադրամի և «Դիալոգ» ռուս-հայկական հասարակական կազմակերպության համագործակցության արդյունքում:

Բանալի-բաներ. Առնո Բաբաջանյան, «Առնո Բաբաջանյանի հիշատակին» հիմնադրամ, «Դիալոգ» ՀԿ, երկերի ժողովածու, գիտական հրատարակություն, բնագիր, ուրտեքստ, բազմահատոր:

Abstract

Art Historian, Vice President of the International Arno Babajanyan Memorial Foundation for Research Work Artyom Gerasim Andreasyan. - "Arno Babajanyan's Collected Works".
Wishes regarding a comprehensive publication of the creative legacy of Arno Harutyun Babajanyan - People's Artist of the USSR, laureate of state and international prizes, composer and pianist - have been voiced both on occasion and without, for already four decades. To fully and comprehensively realize this project, the Moscow-based leadership of the "In Memory of Arno Babajanyan" Foundation has long been carrying out, extensive preparatory work. This includes the collation of manuscript, printed, and audio sources - a process accompanied by the discovery of previously unknown and presumed lost original texts, the creation of a bibliography and discography, and the undertaking of comprehensive historical and textual studies. The main result of all this is the first multi-volume edition of Babajanyan 's works, which is being presented as a scholarly-critical publication, encompassing all genres of the great composer's creative output in 25 volumes (comprising 30 books). Without distinction, the edition will include all preserved complete works as well as the most significant unfinished ones, many of which will appear in new decipherments and reconstructions. All the original texts will be presented in scientifically verified form, accompanied by brief historical and textological commentary. This large-scale scholarly publishing project is being implemented through the collaboration between the "In Memory of Arno Babajanyan" Foundation and the "Dialog" Russian-Armenian non-governmental organization.

Key Words: Arno Babajanyan, "In Memory of Arno Babajanyan" Foundation, "Dialog" NGO, collected works, scholarly edition, original text, urtext, discovery.

Абстракт

Историк искусства, вице-президент Международного Фонда памяти Арно Бабаджаняна по научно-исследовательской работе Артем Герасимович Андреасян. - "Собрание сочинений Арно Бабаджаняна".
Научно-издательский проект Собрания сочинений Арно Арутюновича Бабаджаняна имеет долгую предысторию, начинающуюся еще с весны 1984 г. Если десятилетиями подряд несколько поколений музыкальной общественности и знатоков ограничивались выражением желания увидеть такой сборник изданным, то руководство Международного Фонда памяти Арно Бабаджаняна за сравнительно короткий срок (с середины 2010-х) вело активную подготовительную работу, в процессе которой обсуждались как объем и характер издания, так и вопросы, касающиеся спонсирования, печати и распространения. Согласно ныне утвержденному плану, Собрание сочинений Бабаджаняна является научным изданием, состоящим из 25 томов (в 30 книгах), обобщенных в трех сериях, не считая приложений. Абсолютное множество произведений в

Կոմպոզիտորական արվեստի ժառանգություն

авторских (и авторизованных) текстах будет издано впервые. Всем томам будут уделены предисловия и развернутые комментарии с историографическими и текстологическими подробностями. Во всех сферах изучаемого творческого наследия Бабаджаняна сделано внушающее количество открытий.

Ключевые слова: Арно Бабаджаняна, Международный Фонд памяти Арно Бабаджаняна, «Диалог» 00, собрание сочинений, научная публикация, оригинал, уртекст, открытие.

ԽՄԲԱԳԳԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Մի քանի ամիս առաջ հայ արվեստասեր հանրությանը հայտնի դարձավ Կոմպոզիտորական արվեստի երկերի ակադեմիական ժողովածուի լրամշակված վերահրատարակության մեկնարկը: Հայ մշակույթի համար իրապես կարևոր այս իրադարձությունը լավ առիթ կարող է ընձեռել՝ վերադառնալու առհասարակ հայ կոմպոզիտորների երկերի կանոնավոր բազմահատոր ժողովածուների պատրաստման ու հրատարակման հիմնախնդրին, ինչի մասին գրավոր անդրադարձ արդեն կատարել ենք (3. էջ 4, 7):

Համոզված ենք, որ բոլորիս համար ոչ պակաս նշանակալից իրադարձություն պիտի լինի նմանատիպ ևս մեկ գիտահրատարակչական ծրագրի իրագործումը, որին տասնամյակներ շարունակ սպասել են արվեստագետների և արվեստասերների մի քանի սերունդ: Խոսքն Առնո Բաբաջանյանի երկերի ժողովածուի մասին է, և այս խոսքերի մեջ չկա ոչ մի չափազանցություն:

Դեռևս 1984 թ. ապրիլի 25-ին «Սովետական Հայաստան» օրաթերթում տպագրվեց (և հետագայում մի շարք այլ թերթերում վերատպվեց) Արմենպրեսի համառոտ հաղորդումը Բաբաջանյանի հիշատակին ՀԽՍՀ մինիստրների խորհրդի կազմակերպած մի շարք միջոցառումների մասին, որոնց թվում հիշատակվում է Հայպետհրատկոմի տեղի ստացած առաջարկը՝ նախաձեռնել նրա երկերի ժողովածուի հրատարակումը (4. էջ 4): Գարող է հարց առաջանալ՝ ինչու այս ծրագիրը չիրագործվեց այդ ժամանակ: Մի կողմ դնելով 1980-ականների երևանյան նոտային հրատարակությունների մեծ մասի տեխնիկական որակը, մենք հակված ենք այս խնդիրը բացատրել կոմպոզիտորի իրավահաջորդը հանդիսացող ընտանիքի դիրքորոշմամբ: Եթե 1960-ականների երկրորդ կեսին մի շարք երկեր Երևանում առանձին պրակներով լույս տեսան հենց կոմպոզիտորի նախաձեռնությամբ, ապա Թերեզա Սոկրատի Բաբաջանյանը, որպես իր կոմպոզիտոր ամուսնու՝ մենեջեր և, նույնիսկ խմբագիր, հայտնի է, որ որոշիչ դեր է խաղացել մուկավարնակ բանաստեղծների և երգիչների հետ Բաբաջանյանի համագործակցության հարցում: Այդ տրամաբանությամբ հեղինակի ընտանիքի դիրքորոշումը կարելի է հասկանալ այսպես. եթե այդպիսի հրատարակություն իրականացվի, ապա պիտի կատարվի Մոսկվայում, մանավանդ, որ նրա արխիվի հիմնական մասը պահպանվում էր այդտեղ (այժմ՝ Արա Բաբաջանյանը տեղափոխվել է և նաև հիմնադրամի գործունեությունը Վրաստանի Թբիլիսի):

1990 թ. Արա Բաբաջանյանի ղեկավարությամբ Մոսկվայում հիմնվեց «Առնո Բաբաջանյանի հիշատակին» հիմնադրամը, որի առաջին և գլխավոր նպատակն է վերջինիս ստեղծագործական ժառանգության պահպանումն ու հանրահռչակումը: Եթե հաշվի առնենք այդ տարիների ընդհանուր սոցիալ-տնտեսական, ինչպես նաև քաղաքական,

այսպես ասած, «գարգացումները», այդ ժամանակ Հիմնադրամի կողմից իրականացված համերգային, փառատոնային և մանավանդ հրատարակչական ծրագրերը պիտի համարել սխառնք. դրանք են՝ Բաբաջանյանի դաշնամուրային երկերի հեղինակային կատարումների ձայնասկավառակի վերաթողարկումը, 1991 թ. Մոսկվայում լույս տեսած՝ դաշնամուրային երկերի ժողովածուն (Վյաչեսլավ Գաբրիելովի խմբագրությամբ), հաջորդ տարի՝ Արա Բաբաջանյանի կազմած և հրատարակած երգարանը: Իսկ թե ինչու այդ ժամանակ չիրագործվեց երկերի ժողովածուի ծրագիրը. դա բացատրվում է ոչ միայն տրնտեսական բարդություններով (այլապես դժվար է բացատրել, թե ինչու նույնիսկ 2001 թ. Միխայիլ Տեր-Օհանյանի բացարձակ սկզբնաղբյուրի արժեք ունեցող մենագրությունը լույս տեսավ ընդամենը 200 օրինակով). այստեղ պետք է հաշվի առնել նաև երևանյան արխիվի վիճակը. այն գտնվում էր Բաբաջանյանի երևանյան բնակարանում, որտեղ գրանցված էր նրա ազգական Ղոնարդ Գրիգորյանը, ով նույն բնակարանը վաճառելու ընթացքում 1992 թ. դեկտեմբերի 29-ին կոմպոզիտորի ստեղծագործական (և ընտանեկան) արխիվը հանձնեց Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան, որտեղ այդ արխիվի մշակումը և մատյանի կազմումն իր հերթին եղավ բավականին ծանր ու ժամանակատար գործ:

1996 թ. Առնո Բաբաջանյանի ծննդյան 75-ամյակի առթիվ կայացած հոբելյանական միջոցառումների ընթացքում դարձյալ հնչեցին առաջարկներ՝ հրատարակել նրա երկերի լիակատար ժողովածուն: Հետագայում էլ հայ արվեստագետների կողմից տարբեր առիթներով հնչեցին նմանատիպ ցանկություններ և առաջարկներ, որոնք այդպես էլ մնացին սոսկ ցանկություններ և առաջարկներ: Այս թեմային առնչվող մեր նախորդ հոդվածում մեր մասնակցությունն այս պատմությանը բացատրել էինք հետևյալ խոսքերով՝ «ցանկություն չունենալով անմասն մնալ այս գաղափարի հասունացման և իրագործման ճանապարհից» (1. էջ 33), այնինչ իրական պատճառը եղել է այլ գիտակ անձանց կողմից գիտահրատարակչական հստակ ծրագրի բացակայությունը, ինչպես նաև (ինչն առավել ցավալի է) նոր փաստական բացահայտումներ անելու կամ գոնե եղած տվյալները ճշգրտելու մոտիվացիայի պակասը, այսինքն հարմարավետության գոտում մնալու ակնհայտ համատարած միտումը:

Առնո Բաբաջանյանի երկերի ժողովածուն, որը պատրաստվում է հրատարակման «Առնո Բաբաջանյանի հիշատակին» միջազգային հիմնադրամի որոշմամբ ու համատեղ ջանքերով՝ տողերիս հեղինակի նախաձեռնությամբ և ընդհանուր խմբագրությամբ, լինելու է խորհրդային երաժշտական մշակույթի առավել վառ և յուրատիպ դեմքերից

Կ ո մ պ ո գ ի տ ո թ ա կ ա ն ար վ է ս տ ի ժ ա ո ա ն գ ու թ յ ու ն

ստեղծագործական ժառանգության առաջին բազմա-
հատոր և առաջին բազմաժանր հրատարակությունը: Ըստ
բնույթի՝ այն լինելու է գիտական, ավելի ճիշտ՝ քննական
հրատարակություն, որտեղ Բաբաջանյանի ստեղծագոր-
ծությունների մեծ մասը բնագրային (կամ դրան համագոր-
տեքով կոպիացրվի բացառապես առաջին անգամ, իսկ
արդեն այլևայլ սուպրաթյուններով հայտնի բնագրերն
առանց բացառության պատրաստվում են գանձազան (ինչ-
պես ձեռագիր ու սպագիր, այնպես էլ ձայնագիր) աղբյուր-
ների համեմատության և համադրման սկզբունքով, որպի-
սին ընդունված է երաժշտական տեքստաբանության մեջ:

Բաբաջանյանի երկերի ժողովածուի ընդհանուր նա-
խապատրաստական ծրագիրը հողվածի տեսքով հրատա-
րակվել է 2018 թ. «Հայ կոմպոզիտոր» ամսագրում (1.): Այն
հետագա մասնակի հավելումներով և ճշտումներով հան-
դերձ հաստատվեց Հիմնադրամի ղեկավարության կողմից
և այժմ դրված է հատորների պատրաստման հիմքում: Այժմ
հարկ ենք համարում ներկայացնել այն, ինչ այդ հողվածու
չի մանրամասնվել:

Սկսենք նախապատրաստական փուլերից: Գրանցից
առաջինը հեղինակի մասին եղած հիմնական գրականու-
թյան ձեռքբերումն ու դրանց տրամադրած տեղեկության
համադրումն է. դրանք են՝ Անահիտ Գրիգորյանի, Մեղա
Թաշյանի, Սուսաննա Ամատունու, Վանիկ Սանթրյանի և
առավել մեծ չափով Միխայիլ Տեր-Օհանյանի մենագրու-
թյունները, «Մեր Առնոն» հուշալրումը և «Նվիրվում է Առնո
Բաբաջանյանին» հողվածների ժողովածուն: Հաջորդ փուլը
եղան Բաբաջանյանի երկերի գանձազան հրատարակու-
թյունների մասին տվյալների մատենագիտական որոնում-
ները՝ Հայաստանի ազգային գրադարանի, այդ ժամանակ
առանձին գործող Երաժշտագիտական գրադարանի քար-
տարանային տվյալների, ինչպես նաև մի շարք այլ մատե-
նագիտական տեղեկատու հրատարակությունների հիման
վրա: Նոտային հրատարակությունների մասին տվյալների
ամփոփման հարցում որոշիչ դեր կատարեցին նախ Ռու-
սաստանի պետական գրադարանի առցանց շտեմարաննե-
րը, ապա, «Нотная летопись» պարբերական հրատարա-
կությունը: Երրորդ փուլը եղավ այն, որ Հայաստանի ազգա-
յին գրադարանի արվեստի բաժնի երաժշտական գրակա-
նության ենթաբաժնում պատրաստեցինք Բաբաջանյանի
ինչպես մենանվագ դաշնամուրային երկերի հատորը, այն-
պես էլ էստրադային, մասսայական և այլ երգերի կլավիր-
ների երեք մեծադիր հատորները: Առայժմ վերջին էական
փուլը Բաբաջանյանի երկերի ձեռագիր աղբյուրների հա-
վաքումն է (իհարկե, պատճենների տեսքով), որն սկսվեց
Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարա-
նից, շարունակվեց Հայաստանի կոմպոզիտորների միու-
թյան նոտային գրադարանով, Հայաստանի հանրային ռա-
դիոյի էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի գրադարանով,
Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի գրադա-
րանով և Ռուսաստանի ազգային երաժշտական թանգա-
րանով: Այս հաստատություններից յուրաքանչյուրի ֆոն-
դերն այս գործի համար (և ոչ միայն) կարևորագույն և ան-
փոխարինելի աղբյուրի դեր են կատարում: Այսուհանդերձ,

սա չի նշանակում, որ վերը թվարկված փուլային աշխա-
տանքներն ավարտված են: Քանի որ Առնո Բաբաջանյանի
ստեղծագործական ժառանգության շուրջ նման ծավալուն
գործ իրականացվում է բացառապես առաջին անգամ, տա-
րատեսակ աղբյուրների որոնումները կրում են շարունա-
կական բնույթ: Խոսքը ոչ միայն նոտային բնագրերի մասին
է, այլև դրանց մասին եղած պատմագիտական տվյալների,
որոնց հիմնական աղբյուրը ոչ միայն Բաբաջանյանին
նվիրված հիշյալ հրատարակություններն են, այլև ժամա-
նակի տվետահայ, ռուսալեզու, ինչպես նաև սփյուռքահայ
մամուլը. էլ չենք խոսում թանգարանային և այլ արխիվային
նյութերի մասին:

Քանի որ նախապես ծրագրել էինք կազմման և խմ-
բագրման տեսակետից ակադեմիական մակարդակին հա-
մապատասխանող՝ հնարավորինս լիակատար ժողովա-
ծու, մեր ձեռքի տակ եղած տվյալների համադրման առա-
ջին արդյունքն եղավ այն, որ Բաբաջանյանի երկերի լիա-
կատար ժողովածուն բաղկացած կլինի 35 հատորից՝ միա-
վորված ութ թեմատիկ շարքում, որտեղ կներառվեն նաև
սևագրությունները, լիարժեք երկի չվերածված մեղեդային
գրառումներն ու այլ էքսիզներ, նրա պատկերագրությունը
(որն այդ նպատակով պատրաստել էինք որպես ավարտա-
կան աշխատանք ԵՊՀ-ում) (2.), ինչպես նաև ժամանակա-
կիցների հուշերը և կենսամատենագիտությունը: Հետագա-
յում՝ Հիմնադրամի ղեկավարության հետ տևական խորհր-
դակցությունների արդյունքում տեղի ունեցան ծրագրային
փոփոխություններ. որոշվեց, որ այս ժողովածուում ներառ-
վելու են միայն Բաբաջանյանի գրչից ելած գործերը՝ այն էլ
գլխավորապես ավարտուն գործերը, իսկ անավարտ սևագ-
րություններից կներառվեն այնպիսիք, որոնք, մի դեպքում,
կարևորություն են ներկայացնում պատմական տեսանկ-
յունից (օրինակ՝ «Եղբայրներ» երգը, կամ ջութակի ու դաշ-
նամուրի համար «Կոնցերտ» անավարտ պիեսը, որոնց առ-
կայությամբ բացատրվում է «Պիոներական քայլերգ»-ի ձե-
ռագրերից մեկի վրա առկա «Соч N 3» նշումը), իսկ այլ դեպ-
քերում ձևի և գործիքավորման տեսանկյունից փոքրիշատե
մոտ են ավարտուն համարվելու: Մեղեդային գրառումնե-
րը, որպիսիք Բաբաջանյանի արխիվներում ևս քիչ չեն, ներ-
կա հրատարակչական ծրագրից դուրս են մնում, իսկ լա-
վագույն դեպքում կարող են ամփոփվել առանձին հատո-
րով, ինչը ենթադրում է առանձին խորացված ուսումնա-
սիրություն:

Սա մեկն է այն պատճառներից, որ Առնո Բաբաջանյա-
նի երկերի՝ հրատարակության պատրաստվող ժողովա-
ծուն չենք կոչում լիակատար: Մյուս գլխավոր պատճառը
հետևյալն է. քանի որ, ինչպես արդեն նշեցինք, նման ծավա-
լի և նման բնույթի գործ կատարվում է առաջին անգամ, հե-
տագայում նոր նյութերի և նույնիսկ նոր արխիվների բացա-
հայտումն անխուսափելի է: «Ակադեմիական» եզրույթը
չենք կիրառում, նշվածից բացի, ևս մեկ պատճառով. թեև
նման տիպի ժողովածուները «ակադեմիական» կարող են
համարվել՝ առանց այս կամ այն ակադեմիայի կողմից
պատրաստված լինելու (օրինակ՝ Մերգեյ Ռախմանինովի

Կ ո մ ա ղ գ ի տ ո Ր ա կ ան ար վ ե ս տ ի ժ ա ո ա ն գ ու թ յ ու ն

երկերի նոր 50-հատորյակը), բայց մենք նախընտրել ենք հավատարիմ մնալ գիտական բարեխղճության և ազնվության հիմունքներին՝ գիտակցելով ապագայում բացահայտվելիք հնարավոր բացթողումների, կարևոր հավելումների և ճշտումների անխուսափելիությունը: Խմբագրական խորհրդում ներառված են այն անձինք, ովքեր ամենայն անհիշականությամբ են մասնակցում այս ընդհանուր գործին՝ Արա Առնոյի Բաբաջանյան, Արմեն Գևորգի Սարգսյանց, տողերիս հեղինակը, Արաքայա Ալեքսանի Հայրապետյան, Յուրի Ալեքսանդրի Ռոզում, Ալեքսանդր Շեֆթելի Գինդին, Վալերի Աբիսալի Գերգին: Հիշատակենք նաև հետևյալը. Հիմնադրամի ղեկավարության հետ առաջին իսկ խորհրդակցության արդյունքում եկանք այն համաձայնությանը, որ Առնո Բաբաջանյանի երկերի ժողովածուն տպագրվելու է Մոսկվայում և առաջին հերթին հասցեագրված է լինելու ռուսախոս և ռուսերենին տիրապետող հայ երաժիշտ հանրությանը: Այս նախապատրաստական փուլի վերջնակետը եղավ ս.թ. մարտի 20-ին Արա Բաբաջանյանի և ռուս-հայկական «Դիպոգ» հասարակական կազմակերպության հիմնադիր-տնօրեն Յուրի Նավոյանի ստորագրած հուշագիրը, ըստ որի՝ խնդրո առարկա ժողովածուն լույս կտեսնի «Դիպոգ» ՀԿ համանուն մատենաշարի շրջանակներում* (6), իսկ տպագրական աշխատանքները կվստահվեն մոսկովյան «Песни радио и кино» հրատարակչությանը:

Եվ այսպես, Առնո Բաբաջանյանի երկերի ժողովածուի ներկայումս հաստատված ծրագիրը հետևյալն է: Առաջին շարքում կամփոփվեն գործիքային ստեղծագործությունները. առաջին երկու հատորը նվիրված են մենանվագ դաշնամուրային ստեղծագործություններին, երրորդը՝ դաշնամուրային դուետներին, չորրորդը՝ տարբեր մենանվագ գործիքների և դաշնամուրի համար գրված երկերին (ներառյալ Տրիոն), հինգերորդը՝ լարային կվարտետներին, վեցերորդը՝ Ջութակի կոնցերտի պարտիտուրին, յոթերորդը՝ Թավջութակի կոնցերտի պարտիտուրին, ութերորդը՝ «Առաջին» դաշնամուրային կոնցերտի պարտիտուրին, իններորդը՝ «Հերոսական բալլադի» պարտիտուրին, տասներորդը՝ այս չորս կոնցերտների կլավիրներին: Անտիպ մենանվագ դաշնամուրային երկերը և «Առաջին» դաշնամուրային կոնցերտն ամփոփող հատորների խմբագրությունը վստահել ենք Արաքայա Հայրապետյանին, քանի որ այս գործերը հիմնական նյութն են նրա թեկնածուական ատենախոսության: Ըստ նրա հաղորդած տվյալների՝ «Առաջին» կոնցերտի կլավիրի ծավալը խոստանում է գերազանցել 200 էջը, այդ պատճառով որոշվեց կոնցերտների կլավիրներն ամփոփող հատորը տպագրության պատրաստել երկու գրքով: Բացի Հայրապետյանին վստահված այս երեք հատորից՝ մնացածի խմբագրությունը հանձն է առել տողերիս հեղինակը:

Երկրորդ շարքում կամփոփվեն մնացյալ նվագախմբային ստեղծագործությունները: Առաջին հատորն ամփոփում է

«Աստղային սիմֆոնիա» սառցե-բալետային սյուիտի պարտիտուրը, երկրորդ հատորում կամփոփվեն մնացյալ բալետային պիեսների և «Պարային սյուիտի» պարտիտուրները, երրորդում՝ դրանց կլավիրները, չորրորդ հատորում ծրագրված է ամփոփել թատերական և ռադիոթեմատորությունների համար գրված երաժշտության պարտիտուրները, հինգերորդում՝ կինոերաժշտության սյուիտները (չի բացառվում այս հատորի բաժանումը երկու գրքի), վեցերորդում կամփոփվեն էստրադային և ջազային նվագախմբերի համար գրված պիեսները, յոթերորդում՝ «Պոեմ-նապատյան», ութերորդում՝ այլ նվագախմբային պիեսներ: Առաջմ հայտնենք, որ այս շարքի նյութերը դեռևս հավաքման փուլում են, և այդ պատճառով առաջին շարքի տպագրությանը կհաջորդի երրորդ շարքը, որտեղ կամփոփվեն փոկալ ստեղծագործությունները, և որի համար հավաքված նյութերը երկրորդի համեմատ առավել ամբողջացված են: Մանրամասները շարադրել ենք «Առնո Բաբաջանյանի երկերի լիակատար ժողովածուի պատրաստման մասին» հոդվածում:

Երրորդ շարքի հատորների կազմման խնդիրն ունեցավ իր յուրահատկությունը: Հիմնականը էստրադային և այլ մասսայական երգերի ժամանակագրության ճշգրիտ վերականգնման խնդիրն էր, որ մինչ օրս հաստատուն լուծում չունի: Առավելագույնը, որ մինչ այժմ կարողացել ենք անել, զանազան աղբյուրներից թվագրումներ քաղելն էր և բաղդատելը, իսկ եղածը մոտավորապես լրացնելու եկան այլ անթվակիր երգերի ոճային հատկանիշները. այդ փորձը կատարել էինք Բաբաջանյանի մասին առաջին անգլալեզու մենագրության հեղինակ, ջութակահարուհի Նունե Մելիքյանի խնդրանքով. սակայն այդ փորձը բավարար չենք համարում խնդիրը գիտականորեն լուծված հոչակելու համար (տե՛ս՝ կազմին): Այդ պատճառով երկերի ժողովածուի երրորդ շարքում պահպանել ենք հոդվածում ներկայացված սկզբունքը, ըստ որի՝ երգերը ստեղծագրված են ըստ սկզբնաղբյուր հրատարակությունների: Ստացվել է հինգ մեծածավալ հատոր, որոնցից առաջին չորս հատորում ամփոփվում են կլավիրները: Առաջին հատորում ամփոփվում են «Песни радио и кино» հայտնի մատենաշարում ստեղծ գտած երգերը, երկրորդում՝ այլ պարբերական ժողովածուներում և հեղինակային ժողովածուներում ստեղծ գտած երգերը, երրորդում՝ զանազան տպագիր հրատարակություններից քաղված, ինչպես նաև անտիպ, բայց հեղինակի օրոք ձայնագրված երգերը, չորրորդում՝ անտիպ երգերը, ինչպես նաև ա կապելլա խմբերգերն ու փոկալ-սիմֆոնիկ երկերի (օրինակ՝ «Չոն Հայաստանին») կլավիրները: Հինգերորդ հատորում կամփոփվեն ինչպես խոշոր կտավի փոկալ-սիմֆոնիկ երկերի հեղինակային պարտիտուրները (իբրև բացառություն նշենք «Չոն Հայաստանին», որի գործիքավորումը պատկանում է Մելիք Մավիսակալյանին), այնպես էլ էստրադային երգերի հեղինակային գործիքավորումները: Ելնելով պրակտիկ կիրառման նպատակահարմարության խնդրից՝ խմբագրական խորհուրդը որոշել է այս հինգ հատորները կիսել երկուական գրքերի: Չնայած որ այս ծրագրից դուրս են մնում

* В Москве будет издан многотомный сборник произведений Арно Бабаджаняна /Из страницы 00 «Диалог». — М., 2024. — 22 марта (6).

Կ ո մ պ ո գ ի տ ո ր ա կ ա ն ա ր վ ե ս տ ի Ժ ա ո ա ն գ ու թ յ ու ն

բազմաթիվ էտրադային երգերի պարտիտուրներ, որոնք լավագույն դեպքում կարող են հրատարակվել առանձին մատենաշարի տեսքով, այժմ էլ արդյունքը բացառիկ է. եթե Բարաջանյանի երգերի կլավիրների մինչ օրս ամենաձավայուն ժողովածուն ունի 164 էջ ծավալ և ամփոփում է 39 երգ, ապա նոր ժողովածուում կլավիրները հանդես են գալիս նույն ծավալի մեկի փոխարեն ութ պրակով:

Այսպիսով Առնո Բարաջանյանի երաժշտական-ստեղծագործական ժառանգությունը հանդես է գալիս 25 ամվանական հաստորով՝ երեսուն պրակով: Մրան գումարվում է ևս մեկ բաժին՝ Հավելվածը, որի՝ սկզբնապես նախատեսված հինգ հատորից ծրագրում մնում են երկուսը. առաջինում կամփոփվեն նրա կատարած զանազան երաժշտական մշակումներն ու փոխադրությունները, իսկ երկրորդում կամփոփվեն նրա հողիվածներն ու հարցազրույցները: Այս ծրագրից անկախ՝ շարունակում ենք համարել ինչպես ժամանակակիցների հուշերն ամփոփող հատորը, որը ներկա վիճակով հասել է 520 մեքենագիր էջ ծավալը, այնպես էլ կենսամատենագիտությունը, որի բոլոր բաժինները՝ և բիբլիոգրաֆիան, և նոտոգրաֆիան, և դիսկոգրաֆիան խոստանում են հանդես գալ պատկառելի ծավալով:

Ինչպես արդեն նշեցինք, Բարաջանյանի երկերի ժողովածուն հանդես է գալիս որպես քննական հրատարակություն, որտեղ բոլոր ստեղծագործությունները ներկայացվում են գիտականորեն ճշգրտված բնագրային տեսքով զերծ կատարողական և այլ բնույթի կամայական միջամտություններից: Այսինքն՝ սա հանդես է գալիս որպես «ուր-տեքստ»:

Յուրաքանչյուր հատոր ունի առաջաբանի և ծանոթագրությունների բաժին. եթե սովյալ հատորը պարունակում է մեկից ավելի ստեղծագործություն, առաջաբանում տրվում են դրանց ընդհանուր պատմագիտական փաստերն ու խմբագրական խնդիրներն իրենց առաջարկվող լուծումներով: Ծանոթագրություններում տրվում են տեղեկություններ ինչպես սովյալ երկի ստեղծման, առաջին կատարումների և հրատարակությունների մասին (բացառությամբ մեկական ստեղծագործության նվիրված հատորների, որտեղ այդ տվյալները շարադրվում են առաջաբաններում), այնպես էլ մեր ձեռքի տակ եղած տարբեր ձեռագիր և տպագիր աղբյուրների, ինչպես նաև հեղինակային ձայնագրությունների միջև արձանագրված տարբերությունները, ինչն առաջին անգամ է արվում բարաջանյանագիտության մեջ: Ձայնագրությունները որպես ձեռագրի և տպագրի հավասարազոր աղբյուրներ դիտարկելը վերջին տասնամյակների երաժշտական տեքստաբանության սկզբունքներից է և կիրառվում է նոր և նորագույն շրջանի դասական կոմպոզիտորների (օր. Ռախմանինովի, Սկրյաբինի, Ռավելի, Ֆորեի և այլոց) երկերի նոր գիտական հրատարակություններում: Կարճ ասած՝ մեր ժողովածուում ներկայացվող օժանդակ գիտական ապարատը հանդես է գալիս երկու ուղղությամբ՝ պատմագիտական և տեքստաբանական:

Որպես ընդհանուր կանոն՝ այս հրատարակության մեջ ստեղծագործությունները ներկայացվում են վերջին հեղինակային խմբագրությամբ. բացառություն է «Պոեմ-

ռապսոդիան», որը նախընտրում ենք հրատարակել երեք խմբագրությամբ՝ որպես հեղինակի ստեղծագործական մտահղացումների էվոյուցիայի յուրատեսակ ուղեցույց: Ինչ վերաբերում է այլ երկերին (օր. ջութակի Կոնցերտը կամ «Հերոսական բալլադը»), որոնց ավարտուն բնագրերի միջև կան ոչ պակաս նշանակալի տեքստային տարբերություններ, ասենք՝ ամբողջական հատվածներ են վերախմբագրվել կամ դուրս մնացել հիմնական տեքստից, այդ տարբերությունները ևս ներկայացվելու են ծանոթագրություններում:

Այս գիտահրատարակչական ծրագրի շրջանակներում, հասկանալի է, տեղի ունեցան մեծածավալ բացահայտումներ: Սկսենք բնագրերից: Հայտնաբերվեցին առաջին երկու լարային կվարտետների բնագրերը, որոնք մինչ այժմ համարվում էին անհետ կորած: Բարաջանյանի երևանյան արխիվում պահվող սևագրերի մեջ հայտնաբերվեցին ինչպես ավարտուն ստեղծագործություններ (օրինակ՝ ջութակի և դաշնամուրի համար մի անվերնագիր ուսանողական պիես կամ նույն շրջանի «Մենք՝ հարվածային կոլխոզնիկներ» և «Լուսաբացին» երգերը), այնպես էլ մի շարք պատառիկներ, որոնք մեր վերձանության արդյունքում նույնականացվում են 1942 թ. գրված և մինչ օրս անհետ կորած համարվող «Պար»-ին երկու դաշնամուրի համար: Բնագրագիտական համալիր ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ սիմֆոնիկ «Պոեմ-ռապսոդիա»-ն մեզ է հասել ոչ թե երեք, այլ տասի հասնող տարբերակներով, որոնք խմբավորվում են երեք խմբագրություններում՝ 1955, 1961 և 1981 թթ.: Բացի այդ՝ մեծապես համարվեց (շատ դեպքերում առաջին անգամ կազմված լինելով) այս և բազում այլ ստեղծագործությունների պատմագիտական ծանոթագրական ապարատը: Միայն առաջին հատորի ծանոթագրություններն ի հայտ են բերում բոլորովին նորահայտ և առաջին անգամ համալիր կերպով ճշտված փաստեր, որոնք գլխավորապես վերաբերում են այս կամ այն ստեղծագործության թվագրմանը, հաճախ նաև ստեղծման այլ հանգամանքների և առաջին հեղինակային կատարումներին՝ Պրեյլուդից և «Վաղարշապատի պար»-ից մինչև «Պոեմ», «Պիոներական քայլերգ»-ից մինչև «Էլեգիա»: Նույն ձևով ամբողջացվեց Տրիոյի, ջութակի Սոնատի, «Հերոսական բալլադի» և այլ մեծակտավ երկերի պատմությունը: Ջութակի Կոնցերտի և «Անուրջներ» կոնցերտային պիեսի մասին մեր պատմագիտական ակնարկները հրատարակվել են առանձին հողվածների տեսքով: «Պոեմ-ռապսոդիայի» և առաջին Կվարտետի մասին ակնարկները ներառվել են ԵՊԿ երաժշտագիտական բաժնի շրջանավարտ Լիանա Պողոսյանի զեկուցումներում և ավարտական աշխատանքում (5): Մեր ուսումնասիրությունների այս և այլ արդյունքներից զգալի չափով օգտվել է նաև Նունե Մելիքյանը և ներառել դրանք իր բոլորովին վերջերս լույս տեսած գրքում (7): Բարաջանյանի երկերի ժողովածուի շրջանակներում մեր պատրաստած խմբագրությունները հասցրել են ձեռք բերել նաև կատարողական կյանք: Դրանք են՝ ջութակի Կոնցերտը, Պոեմ-Ռապսոդիան, նաև թավջութակի Կոնցերտն ու առաջին Կվարտետը:

Կրկնենք. փույթ չէ, որ այս ժողովածուն համարվի կամ

ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԷՍՏԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ջհամարվի ակադեմիական կամ լիակատար. ինչ էլ լինի սա Առնո Բաբաջանյանի երկերի առաջին ժողովածուն է նրա հիշատակի հիմնադրամի կողմից իրականացվող՝ այսինքն ժառանգի կողմից վերահսկվող հրատարակություն, որն այսպես թե այնպես դատապարտված է լինել հիմք և ուղենիշ Բաբաջանյանի ստեղծագործության հետագա ուսումնասիրությունների և տարատեսակ հրատարակությունների համար, ինչպես նաև հանդես գալ որպես մեկը հայ երաժշտական մշակույթի եզակի ներկայանալի հուշարձաններից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Անդրեասյան Ա.Գ.*, Առնո Բաբաջանյանի երկերի լիակատար ժողովածուի պատրաստման մասին, //Հայ կոմպոզիտոր. 2018. N 1-2., էջ 32-43:
2. *Անդրեասյան Ա.Գ.*, Առնո Բաբաջանյանի կերպարը արվեստում. (Մագիստրոսական թեզ), /գիտ. դեկ. արվեստ. թեկնածու, դոց. Լ. Ս. Պիպոյան, Երևանի պետական համալսարան, Եր., 2019:
3. *Անդրեասյան Ա.Գ.*, Հայ կոմպոզիտորների երկերի ժողովածուների պակասի մասին. //Երաժիշտ. 2020, մարտ, էջ 4, 7:
4. Կոմպոզիտորի հիշատակին. //Արմենպրես //Սովետական Հայաստան, 1984, 25, ապրիլի:
5. *Պողոսյան Լ. Ս.*, Առնո Բաբաջանյան. Ստեղծագործական դիմանկար. (Բակալավրի դիպլոմային աշխատանք) /գիտ. դեկ. արվեստ. թեկնածու, դոց. Լ. Չ. Սահակյան, ԵՊԿ, Եր., 2024:
6. URL: <https://dialogorg.ru/events/v-moskve-budet-izdan-mnogotomnyy-sbornik-proizvedeniy-arno-babadzhanyana/>
7. *Melikian, N.M.*, Arno Babajanian. An Armenian Beat in Soviet Time. — Yerevan: Newmag, 2024.

Andreasyan A.G., On the Preparation of the Complete Works of Arno Babajanian. //Armenian Composer. 2018. N 1-2, pp. 32-43.

Andreasyan A.G., Arno Babajanian's Character in Art. (Master's Thesis) / Scientific supervisor: L.S. Pipoyan, PhD in Arts, Associate Professor, Yerevan State University, Yerevan, 2019.

Հեղինակի մասին. ԱՐՏՅՈՄ ԳԵՐԱՍԻՄՄԻ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ (ծն. 10.01.1997, Վանաձոր), արվեստի պատմաբան: Ավարտել է՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժինը (բակալավրիատ՝ 2017, մագիստրատուրա՝ 2019, գերազանցությամբ): 2013-2019 թթ. հանդես է եկել ԵՊՀ մշակույթի կենտրոնում որպես դաշնակահար, կոմպոզիտոր, գործիքավորող և խմբագիր՝ մասնակցելով տարբեր հանրապետական մրցույթների և փառատոների և արժանանալով պատվավոր մրցանակների: Նրա երաժշտական խմբագրությամբ ԵՊՀ-ում լույս են ընծայվել մի շարք ժողովածուներ՝ «Անկախության սերնդի ձայնը» (2018), «Քնար Համալսարանի» (2019), «Պիեսների սցենարական մշակումներ» (2021): 2019 թ.-ից «Առնո Բաբաջանյանի հիշատակին» միջազգային հիմնադրամի գիտահետազոտական գծով փոխնախագահն է: Նրա ընդհանուր խմբագրությամբ Մոսկվայում հրատարակության է պատրաստվում Բաբաջանյանի երկերի գիտական լիակատար ժողովածուն: Հեղինակ է 10-ից ավելի հոդվածների և գրախոսությունների, որոնք հրատարակվել են հայկական և ռուսական արվեստագիտական մամուլում: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են դասական երաժշտության պատմությունը և տեքստաբանությունը:

About the author: ARTYOM GERASIM ANDREASYAN (b. 10.01.1997, Vanadzor), art historian. Graduated from the Faculty of History at Yerevan State University, receiving the bachelor's degree in 2017 and the master's degree in 2019 with distinction. From 2013 to 2019 he was a member of the YSU Culture Centre as pianist, composer, arranger and editor, participating in various republican contents and festivals and receiving honorary awards. He is the editor of the following anthologies, published at YSU — "The Voice of the Independence Generation" (2018), "Universitarian Lyre" (2019), "Arrangements of Theatre Plays" (2021). Since 2019, he has been vice-president of the Arno Babajanian International Foundation for scholarly research and Editor-in-chief of the scholarly edition of the Complete works of Babajanian (to be published in Moscow). Author of more than 10 articles and reviews published in the Armenian and Russian art-critic press. His research interest include classical music history and text-criticism.

Об авторе: АРТЕМ ГЕРАСИМОВИЧ АНДРЕАСЯН (род. 10.01.1997, Ванадзор), историк искусства. Окончил: Ереванский государственный университет, факультет истории (в 2013 — бакалавриат, в 2019 — магистратуру, с отличием). С 2013 по 2019 годы выступал в Центре культуры ЕГУ как пианист, композитор, аранжировщик и редактор, участвуя в различных республиканских конкурсах и фестивалях и завоевывая почетные награды. Под его музыкальной редакцией в ЕГУ был издан ряд антологий - «Голос поколения независимости» (2018), «Лири университетская» (2019), «Сценарные обработки пьес» (2021). С 2019 г. является вице-президентом Международного Фонда памяти Арно Бабаджаняна по научно-исследовательской деятельности и главным редактором научного полного собрания сочинений Бабаджаняна, которое готовится к изданию в Москве. Автор свыше 10-ти статей и рецензий, опубликованных в армянской и российской искусствоведческой прессе. В круг его научных интересов входит история классической музыки и текстология.

Andreasyan A.G., On the Lack of Collections of Works by Armenian Composers. //Yerazhisht. 2020, March, pp. 4, 7.

In Memory of the Composer. //Armenpress //Soviet Armenia, 1984, April 25.

Poghosyan L.A., Arno Babajanian: A Creative Portrait. (Bachelor's Thesis) / Scientific supervisor: L.Z. Sahakyan, PhD in Arts, Associate Professor, YSC, Yerevan, 2024.

A multi-volume collection of works by Arno Babajanian will be published in Moscow / From the page of the NGO "Dialogue". — M., 2024. — March 22. — URL: <https://dialogorg.ru/events/v-moskve-budet-izdan-mnogotomnyy-sbornik-proizvedeniy-arno-babadzhanyana/>

Melikian, N. M. Arno Babajanian. An Armenian Beat in Soviet Time. Yerevan.

REFERENCES

1. *Andreasyan A. G.*, Arno Babajanyani Yerkeri liakatar zhoghovatsui patrastman masin, //Armenian Composer. 2018. N 1-2, ejj 32-43.
2. *Andreasyan A.G.*, Arno Babajanyani kerpar' arvestum. (Magistrosakan thez), /git. ghek.: arvest. theknatsu, dotz. L.S. Pipoyan, Yerevani petakan hamalsaran, Yer., 2019.
3. *Andreasyan A.G.*, Hay kompozitorneri yerkeri zhoghovatsuneri pakasi masin., //Yerazhisht 2020, Mart, ejj 4, 7.
4. Kompozitori hishatakin., //Armenpres //Sovetakan Hayastan, 1984, 25, aprili.
5. *Poghosyan L.A.*, Arno Babajanyan. Stegtsagortsakan dimankar. (Bakalavri diplomayin ashkhatanq) /git. ghek.: arvest. theknatsu, dotz. L.Z. Sahakyan, YPK, Yer., 2024.
6. URL: <https://dialogorg.ru/events/v-moskve-budet-izdan-mnogotomnyy-sbornik-proizvedeniy-arno-babadzhanyana/>
- Melikian, N. M.*, On the Preparation of the Complete Works of Arno Babajanian. //Armenian Composer. 2018. N 1-2, pp. 32-43.